ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2015 թվականի **թիվ 151** քաղ. Մոսկվա

Արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատման, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման մեթոդական մոտեցումների մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 43-րդ կետի 15-րդ ենթակետին համապատասխան, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 19 որոշմամբ հաստատված՝ Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրագործման միջոցառումների պլանի XII բաժնի 3.1 կետի իրագործման նպատակներով, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Հաստատել կից ներկայացված՝ Արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության

գնահատման, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման մեթոդական մոտեցումները:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի
նոյեմբերի 17-ի թիվ 151 որոշմամբ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատման, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Մեթոդական մոտեցումները մշակվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 19 որոշմամբ հաստատված՝ Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրագործման միջոցառումների պլանի (այսուհետ՝ միջոցառումների պլան) XII բաժնի 3.1 կետի իրագործման նպատակներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի փետրվարի 4-ի թիվ 4 որոշմամբ հաստատված՝ Արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացման հիմնական ուղղությունների իրագործման միջոցառումների պլանի կատարման 2015 թվականի մանրամասնեցված պլանի (այսուհետ՝ 2015 թվականի մանրամասնեցված պլան) 3.1.1, 3.1.3 եւ 3.1.5 կետերի կատարման շրջանակներում:

2. Սույն Մեթոդական մոտեցումները մշակվել են միասնական մոտեցումներ ձեւավորելու նպատակներով՝

ա) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների (այսուհետ համապատասխանաբար՝ Հանձնաժողով, Հանձնաժողովի դեպարտամենտներ) կողմից Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի եւ ակտերի վերլուծության անցկացման նկատմամբ, որոնցով սահմանվում են փաստաթղթերը եւ (կամ) ձեւերը, թղթային կրիչի վրա դրանց լրացման կարգը, փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատումը, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատումը.

բ) Միության անդամ պետությունների կողմից (այսուհետ՝ անդամ պետություններ) անդամ պետությունների այն նորմատիվ իրավական ակտերի եւ երրորդ երկրների հետ անդամ պետությունների կնքած այն միջազգային պայմանագրերի վերլուծության անցկացման նկատմամբ, որոնցով սահմանվում են փաստաթղթերը եւ (կամ) ձեւերը, թղթային կրիչի վրա դրանց լրացման կարգը, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատումը:

3. Սույն Մեթոդական մոտեցումների նպատակներով օգտագործվում են հետեւյալ հասկացությունները, որոնք ունեն հետեւյալ իմաստը.

տեղեկությունների վերլուծություն՝ նման տեղեկությունների, դրանց իմաստային բովանդակության եւ նշանակության համադրման գործընթացը.

բիզնես-պետական մարմիններ (B2G)՝ տեղեկատվական փոխգործակցության ուղղություն, որի դեպքում շահագրգիռ անձը լիազորված մարմին է ներկայացնում պահանջվող տեղեկատվությունը (փաստաթղթեր կամ տեղեկություններ, այդ թվում՝ շահագրգիռ անձանց այն հայտարարություններն ու դիմումները, որոնք պահանջվում են այդ փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու համար).

պետական մարմիններ-բիզնես (G2B)՝ տեղեկատվական փոխգործակցության ուղղություն, որի դեպքում լիազորված մարմինը շահագրգիռ անձին է ներկայացնում պահանջվող տեղեկատվությունը (փաստաթղթեր կամ տեղեկություններ).

շահագրգիռ անձինք՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձ, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ.

ընդհանուր տեղեկություններ՝ տեղեկություններ, որոնք ունեն միատեսակ անվանում, իմաստով նման են եւ օգտագործվում են 2 եւ ավելի փաստաթղթերում.

տեղեկությունների նկարագրություն՝ տեղեկությունների հիմնական հատկանիշներն ու նշանակությունը բացահայտող իմաստային բովանդակության նկարագրություն.

տեղեկությունների օպտիմալ ցանկ՝ տեղեկությունների ցանկ, որը չի պարունակում տեղեկությունների կրկնօրինակում.

տեղեկությունների ամբողջական ցանկ՝ այն տեղեկությունների ցանկը, որոնք անհրաժեշտ են շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմիններին՝ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու համար.

լիազորված մարմին՝ անդամ պետության պետական մարմին կամ դրա կողմից սահմանված կազմակերպություն, որն օժտված է առանձին ոլորտներում պետական քաղաքականության իրագործման լիազորություններով.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ օգտագործվում է «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) սահմանված նշանակությամբ:

Սույն Մեթոդական մոտեցումներում օգտագործվող մյուս հասկացություններն ընկալվում են միջոցառումների պլանով սահմանված իմաստներով:

4. Սույն Մեթոդական մոտեցումներին համապատասխան անցկացվում են արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ

փաստաթղթերի եւ տեղեկությունների վերլուծություն, նշված փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատում, ինչպես նաեւ պետական կարգավորման հետեւյալ ոլորտների մասով էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատում՝

ա) մաքսային կարգավորում,

բ) արժութային կարգավորում,

գ) հարկային կարգավորում,

դ) մաքսասակագնային կարգավորում,

ե) ոչ սակագնային կարգավորում,

զ) տեխնիկական կարգավորում,

է) սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ,

ը) ֆինանսական ծառայություններ (բանկային, ապահովագրական),

թ) տրանսպորտ եւ փոխադրումներ,

ժ) մտավոր սեփականություն:

5. Հանձնաժողովի այն դեպարտամենտը, որը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 192 հրամանին համապատասխան 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.1-3.1.6 կետերի պատասխանատու կատարողն է (այսուհետ՝ պատասխանատու դեպարտամենտ), ապահովում է անդամ պետությունների կողմից սույն Մեթոդական մոտեցումների 2-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան՝ դրանց կողմից անցկացված վերլուծության եւ գնահատման արդյունքների հիման վրա՝ ըստ թիվ 1 եւ թիվ 2 հավելվածներին համապատասխան ձեւերի, ինչպես նաեւ ըստ թիվ 3 հավելվածին համապատասխան 2-րդ ձեւի՝ Հանձնաժողով տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ հարցման ուղարկումը:

Իրենց իրավասության շրջանակներում Հանձնաժողովի դեպարտամենտները, այդ թվում՝ պետական կարգավորման համապատասխան ոլորտներում 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.1-3.1.6 կետերի մասով նշված հրամանին համապատասխան համակատարողներ հանդիսացող դեպարտամենտները, անցկացնում են սույն Մեթոդական մոտեցումների 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան վերլուծությունն ու գնահատումը, ինչպես նաեւ՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 1 եւ թիվ 2 հավելվածներով նախատեսված ձեւերի, եւ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 3 հավելվածով նախատեսված 2-րդ ձեւի, անդամ պետությունների կողմից սույն Մեթոդական մոտեցումների 2-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան՝ դրանց կողմից անցկացված վերլուծության եւ գնահատման արդյունքների հիման վրա ներկայացված տեղեկատվության մշակումը:

Պատասխանատու դեպարտամենտն իրականացնում է Հանձնաժողովի դեպարտամենտների կողմից սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ դրանց կողմից կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 1-3 հավելվածներով նախատեսված ձեւերի ներկայացված տեղեկատվության ամփոփումն ու մշակումը:

6. Սույն Մեթոդական մոտեցումներին համապատասխան՝ աշխատանքի արդյունքներն են 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.2, 3.1.4 եւ 3.1.6 ենթակետերով նախատեսված եզրակացությունների, եւ այն փաստաթղթերից վերցված տեղեկությունների օպտիմալ ցանկերի ձեւավորման մասին առաջարկությունների նախապատրաստումը, որոնք անհրաժեշտ են շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմիններին՝ պետական կարգավորման համապատասխան ոլորտների մասով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս տեղեկությունների փոխանակման համար (նշելով Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերն ու ակտերը, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերն ու երրորդ կողմերի հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերը (այսուհետ՝ ակտեր)):

II. Ակտերի վերլուծության անցկացման մոտեցումները

7. Ակտերի վերլուծությունն անցկացվում է այն փաստաթղթերը որոշելու նպատակով, որոնցում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ՝ ուղղված դրանցում պարունակվող տեղեկությունների միասնականեցմանն ու ներդաշնակեցմանը:

Ակտերի վերլուծությունն անցկացվում է փաստաթղթերը եւ (կամ) ձեւերը, թղթային կրիչի վրա դրանց լրացման կարգը, ինչպես նաեւ այդ ակտերի ընդունման մակարդակը սահմանող փաստաթղթերն ու ակտերը որոշելու միջոցով:

8. Ակտերի վերլուծությունն անցկացվում է ըստ պետական կարգավորման ոլորտների՝ Հանձնաժողովի այն դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից, որոնք պետական կարգավորման համապատասխան ոլորտներում իրագործում են իրենց գործառույթները հետեւյալ ուղղություններով՝

ա) Միության մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխում (ներմուծում, արտահանում).

բ) շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմինների միջեւ (B2G, G2B) տեղեկատվական փոխգործակցություն:

9. Ակտերի վերլուծության անցկացման ընթացքում Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից լրացվում են 4 աղյուսակներ՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 1 հավելվածով նախատեսված ձեւի՝

ներմուծման մասով՝ B2G ուղղության համար,

ներմուծման մասով՝ G2B ուղղության համար,

արտահանման մասով՝ B2G ուղղության համար,

արտահանման մասով՝ G2B ուղղության համար:

Այդ ձեւի 1-7-րդ սյունակներում նշվում է հետեւյալ տեղեկատվությունը՝

1-ին սյունակում՝ փաստաթղթի հերթական համարը աղյուսակում.

2-րդ սյունակում՝ պետական կարգավորման այն ոլորտի անվանումը, որին վերաբերում է փաստաթղթերը եւ (կամ) ձեւերը, թղթային կրիչի վրա դրանց լրացման կարգը սահմանող՝ ընդունված ակտը.

3-րդ սյունակում՝ ակտով սահմանված փաստաթղթի անվանումը.

4-րդ սյունակում՝ փաստաթուղթը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը).

5-րդ սյունակում՝ 4-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր,

ծածկագիր «3»՝ երրորդ կողմերի հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրեր:

Այն դեպքում, եթե 5-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ նախատեսված՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան (այսուհետ՝ աշխարհի երկրների դասակարգիչ) ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը.

6-րդ սյունակում՝ թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը):

Այն դեպքում, եթե թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանված չեն, ապա 6-րդ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

7-րդ սյունակում՝ 6-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր,

ծածկագիր «3»՝ երրորդ կողմերի հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրեր:

Այն դեպքում, եթե 7-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 6-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 7-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը:

10. Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից ակտերի վերլուծության անցկացման արդյունքների հիման վրա Հանձնաժողովի դեպարտամենտները պատրաստում են 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.2 ենթակետով նախատեսված եզրակացությունները՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 3 հավելվածով նախատեսված 1-ին ձեւի: Այդ եզրակացություններում նշվում են (ըստ պետական կարգավորման ոլորտների)՝

ա) փաստաթղթերի ընդհանուր քանակը, այդ թվում՝

Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով սահմանված փաստաթղթերի քանակը,

անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության),

երրորդ երկրների հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերով սահմանված փաստաթղթերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

բ) փաստաթղթերը սահմանող ակտերի ընդհանուր քանակը, այդ թվում՝

Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի քանակը,

անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության),

երրորդ երկրների հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության):

11. Այն դեպքում, եթե Հանձնաժողովի դեպարտամենտների եւ (կամ) լիազորված մարմինների կողմից ակտերով սահմանված առանձին փաստաթղթերի մասով վերլուծություն չի անցկացվել, Հանձնաժողովի դեպարտամենտները պատրաստում են եզրակացություններ՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 3 հավելվածով նախատեսված 2-րդ ձեւի, որոնցում նշվում են այդ փաստաթղթերի, դրանք սահմանող ակտերի, ինչպես նաեւ դրանք վերլուծության մեջ չներառելու պատճառների մասին տեղեկություններ:

III. Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատում անցկացնելու մոտեցումները

12. Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատումն անցկացվում է ակտերում՝ փաստաթղթերն էլեկտրոնային տեսքով ձեւակերպելու հնարավորություն նախատեսող դրույթների առկայությունը որոշելու նպատակով:

Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատումն անցկացվում է ակտերը՝ դրանցում հետեւյալ հնարավորությունները նախատեսող դրույթների առկայության տեսանկյունից վերլուծելու միջոցով՝

ա) լիազորված մարմինների կողմից էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով փաստաթղթերի ձեւակերպում,

բ) շահագրգիռ անձանց կողմից էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով փաստաթղթերի (հայտարարությունների, դիմումների) ներկայացում,

գ) լիազորված մարմինների կողմից ձեւակերպված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ձեւակերպում,

դ) շահագրգիռ անձանց կողմից փաստաթղթերի (հայտարարությունների, դիմումների) էլեկտրոնային պատճենների ներկայացում,

ե) ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների վարում լիազորված մարմինների կողմից,

զ) ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկություններն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրում,

է) «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործում՝ որպես փաստաթղթերի ձեւակերպման հաստատում:

13. Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատումն անցկացվում է Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից՝ հետեւյալ ուղղություններով՝

ա) Միության մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխում (ներմուծում, արտահանում),

բ) շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմինների միջեւ (B2G, G2B) տեղեկատվական փոխգործակցություն:

14. Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատում անցկացնելու ընթացքում Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից լրացվում են 4 աղյուսակներ՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 1 հավելվածով նախատեսված ձեւի՝

ներմուծման մասով՝ B2G ուղղության համար,

ներմուծման մասով՝ G2B ուղղության համար,

արտահանման մասով՝ B2G ուղղության համար,

արտահանման մասով՝ G2B ուղղության համար:

Այդ ձեւի 8-21-րդ սյունակներում նշվում է հետեւյալ տեղեկատվությունը՝

8-րդ սյունակում՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով փաստաթղթի ձեւակերպման հնարավորությունը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

9-րդ սյունակում՝ 8-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 9-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 8-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 9-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը.

10-րդ սյունակում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

11-րդ սյունակում՝ 10-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 11-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 10-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 11-րդ սյունակում նույնպես նշվում է «0» (զրո) ծածկագիրը.

12-րդ սյունակում՝ փաստաթղթի էլեկտրոնային պատճենի ներկայացման անհրաժեշտությունը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

13-րդ սյունակում՝ 12-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 13-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 12-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 13-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը.

14-րդ սյունակում՝ փաստաթղթի էլեկտրոնային պատճենի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

15-րդ սյունակում՝ 14-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 15-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 14-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 15-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը.

16-րդ սյունակում՝ ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրները (ներառյալ թույլատրման փաստաթղթերի համար էլեկտրոնային ռեեստրները) լիազորված մարմինների կողմից վարելու հնարավորությունը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

17-րդ սյունակում՝ 16-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 17-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 16-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 17-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը.

18-րդ սյունակում՝ ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրներն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը): Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

19-րդ սյունակում՝ 18-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 19-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Այն դեպքում, եթե 18-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 19-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը.

20-րդ սյունակում՝ այն ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը), որով սահմանվում է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը՝ որպես լիազորված մարմինների կողմից փաստաթղթերի ձեւակերպման հաստատում: Այդ ակտի բացակայության դեպքում տվյալ սյունակում նշվում է «0» ծածկագիրը.

21-րդ սյունակում՝ 20-րդ սյունակում նշված ակտի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծածկագրված տեսքով՝

ծածկագիր «1»՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր եւ ակտեր,

ծածկագիր «2»՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտեր:

Այն դեպքում, եթե 21-րդ սյունակում նշվում է «2» ծածկագիրը, ապա դրանից հետո «,» նշանի միջոցով նշվում է այն անդամ պետության տառային ծածկագիրը, որտեղ, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ընդունվել է տվյալ նորմատիվ իրավական ակտը:

Եթե 20-րդ սյունակում նշված է «0» ծածկագիրը, ապա 21-րդ սյունակում նույնպես նշվում է «0» ծածկագիրը:

15. Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների կողմից էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման անցկացման արդյունքների հիման վրա Հանձնաժողովի դեպարտամենտները պատրաստում են 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.6 ենթակետով նախատեսված եզրակացությունները՝ ըստ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 3 հավելվածով նախատեսված 3-րդ ձեւի, որոնցում նշվում են հետեւյալ ցուցանիշները (ըստ պետական կարգավորման ոլորտների)՝

ա) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված են էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով դրանց ձեւակերպման հնարավորությունը եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ձեւակերպման հնարավորությունը սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ձեւակերպման հնարավորությունը սահմանված է անդամ պետությունների

նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

բ) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված են էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

գ) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված են դրանց էլեկտրոնային պատճենը ներկայացնելու անհրաժեշտությունը եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային պատճենը ներկայացնելու անհրաժեշտությունը սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով էլեկտրոնային պատճենը ներկայացնելու անհրաժեշտությունը սահմանված է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

դ) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված են դրանց էլեկտրոնային պատճենների ձեւաչափն ու կառուցվածքը, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ՝ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով դրանց էլեկտրոնային պատճենի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով դրանց էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

ե) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված են ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրները (ներառյալ թույլատրման փաստաթղթերի համար էլեկտրոնային ռեեստրները) լիազորված մարմինների կողմից վարելու հնարավորությունը, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրները (ներառյալ թույլատրման փաստաթղթերի համար էլեկտրոնային ռեեստրները) լիազորված մարմինների կողմից վարելու հնարավորությունը սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրները (ներառյալ թույլատրման փաստաթղթերի համար էլեկտրոնային ռեեստրները) լիազորված մարմինների կողմից վարելու հնարավորությունը սահմանված է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

զ) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված է ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկություններն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ՝ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների

տեղեկությունները «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունները «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը սահմանված է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

է) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված՝ ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը՝ որպես փաստաթղթերի ձեւակերպման հաստատում, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը սահմանված է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

ը) այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով ակտերով սահմանված է դրանց ձեւակերպումը միայն թղթային կրիչների վրա, եւ փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ դրանց մասնաբաժինը (տոկոսներով), այդ թվում՝

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով դրանց ձեւակերպումը միայն թղթային կրիչների վրա սահմանված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով,

այն փաստաթղթերի քանակը, որոնց մասով դրանց ձեւակերպումը միայն թղթային կրիչների վրա սահմանված է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության):

IV. Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատման մոտեցումները

16. Փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատումն անցկացվում է այն փաստաթղթերից տեղեկությունների օպտիմալ ցանկերի ձեւավորման համար առաջարկությունների նախապատրաստման նպատակով, որոնք անհրաժեշտ են շահագրգիռ անձանց եւ լիազորված մարմիններին՝ պետական կարգավորման համապատասխան ոլորտների մասով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս տեղեկությունների փոխանակման համար:

Փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատումն անցկացվում է սույն Մեթոդական մոտեցումների II եւ III բաժիններին համապատասխան անցկացված՝ ակտերի վերլուծության ընթացքում սահմանված փաստաթղթերից վերցված տեղեկությունների հավաքման, նկարագրության եւ վերլուծության միջոցով:

17. Փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատումն իրականացվում է 2 փուլով:

Առաջին փուլում Հանձնաժողովի դեպարտամենտների եւ պետական կարգավորման յուրաքանչյուր ոլորտի հարցերով լիազորված մարմինների կողմից լրացվում է աղյուսակ՝ սույն Մեթոդական մոտեցումների թիվ 2 հավելվածով նախատեսված ձեւով, որում նշվում են՝

ա) 1-ին սյունակում՝ պետական կարգավորման այն ոլորտը, որին վերաբերում է փաստաթղթերը եւ (կամ) դրանց լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտը.

բ) 2-րդ սյունակում՝ փաստաթղթից վերցված տեղեկությունների անվանումը.

գ) 3-րդ սյունակում՝ 2-րդ սյունակում նշված փաստաթղթից վերցված տեղեկությունների նկարագրությունը.

դ) 4-րդ սյունակում՝ փաստաթղթի անվանումը՝ փաստաթուղթը սահմանող ակտին համապատասխան.

ե) 5-րդ սյունակում՝ թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը) (նշվում են սույն Մեթոդական մոտեցումների թիվ 1 հավելվածով նախատեսված ձեւի 6-րդ սյունակում նշված ակտերի վավերապայմանները):

Տվյալ աշխատանքի արդյունքների հիման վրա պետական կարգավորման յուրաքանչյուր ոլորտի մասով ձեւավորվում է տեղեկությունների ամբողջական ցանկը:

Երկրորդ փուլում պատասխանատու դեպարտամենտի կողմից պետական կարգավորման յուրաքանչյուր ոլորտի մասով անցկացվում է փաստաթղթերից վերցված տեղեկությունների վերլուծություն անվանումների մասով՝ դրանց իմաստային նմանության տեսանկյունից (օրինակ՝ «դատարկում» եւ «բեռնաթափում», «առեւտրական» եւ «վաճառող» բառերը հոմանիշներ են)՝ ընդհանուր տեղեկությունները որոշելու նպատակով:

Տվյալ աշխատանքի արդյունքների հիման վրա պետական կարգավորման յուրաքանչյուր ոլորտի մասով անցկացվում է տեղեկությունների օպտիմալ ցանկի ձեւավորման հնարավորության գնահատում, պատրաստվում են դրա կազմության վերաբերյալ առաջարկություններ, եւ համապատասխան տեղեկատվությունը թիվ 4 հավելվածի համաձայն սահմանված ձեւով մուտքագրվում է աղյուսակ, որում նշվում են՝

ա) 1-ին սյունակում՝ ակտով սահմանվող փաստաթղթից վերցված տեղեկությունների անվանումը.

բ) 2-րդ սյունակում՝ 1-ին սյունակում նշված տեղեկությունների նկարագրությունը.

գ) 3-րդ սյունակում՝ պետական կարգավորման այն ոլորտը, որին վերաբերում է փաստաթղթերը եւ (կամ) դրանց լրացման ձեւն ու կարգը սահմանող՝ ընդունված ակտը.

դ) 4 - ... N սյունակների անվանումներում՝ փաստաթղթերը սահմանող ակտերին համապատասխան փաստաթղթերի անվանումները, եւ «,» նշանի միջոցով փաստաթղթերի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտերի վավերապայմանները (ընդունման համարն ու ամսաթիվը, անվանումը).

ե) 4 - ... N սյունակներում՝ ծածկագրված տեսքով 4 - ... N սյունակների անվանումներում նշված փաստաթղթերում 1-ին սյունակից վերցված տեղեկությունների առկայության մասին տեղեկատվությունը՝

ծածկագիր «0»՝ ոչ,

ծածկագիր «1»՝ այո:

18. Պատասխանատու դեպարտամենտը փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատման անցկացման արդյունքների հիման վրա պատրաստում է 2015 թվականի մանրամասնեցված պլանի 3.1.4 ենթակետով նախատեսված եզրակացությունը, որը պարունակում է հետեւյալ

տեղեկատվությունը՝

ա) փաստաթղթերից վերցված տեղեկությունների ընդհանուր քանակը,

բ) ընդհանուր տեղեկությունների քանակը,

գ) ընդհանուր տեղեկություններով միավորված փաստաթղթերից վերցված տեղեկությունների քանակը,

դ) տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանը, որը հաշվարկվել է ըստ հետեւյալ բանաձեւի՝

Տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանը,

$$=\frac{N_1+N_2-N_3}{N_1}\times 100\% ,$$

որտեղ՝

N_1՝ փաստաթղթերից վերցված տեղեկությունների ընդհանուր քանակը,

N_2՝ ընդհանուր տեղեկությունների քանակը,

N_3՝ ընդհանուր տեղեկություններով միավորված փաստաթղթերից վերցված տեղեկությունների քանակը:

Տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանը ցույց է տալիս փաստաթղթերից վերցված տեղեկություններն ընդհանուր տեղեկությունների հետ միավորելու եւ տեղեկությունների օպտիմալ ցանկ ստանալու հնարավորության մակարդակը (որքան բարձր է տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանը, այնքան մեծ է փաստաթղթերից վերցված տեղեկություններն ընդհանուր տեղեկությունների հետ միավորելու եւ տեղեկությունների օպտիմալ ցանկ ստանալու հնարավորությունը):

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված տեղեկությունների միասնականացման եւ ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության գնահատման, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման մեթոդական մոտեցումների

(ձեւ)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

վերլուծության եւ գնահատման անցկացման արդյունքների հիման վրա

Տեղափոխման ուղղությունը——————————————— (ներմուծում, արտահանում՝ նշել անհրաժեշտը)													Փոխգործակցության ուղղությունը——————————————— (B2G, G2B՝ նշել անհրաժեշտը)									
Համարը՝ ը/կ	պետական կարգավորման ոլորտը	փաստաթղթի անվանումը	ակտ[1]		ակտ[2]		ակտ[3]		ակտ[4]		ակտ[5]		ակտ[6]		ակտ[7]		ակտ[8]		ակտ[9]	
			վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը	վավերապայմանները	ընդունման մակարդակը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21

[1]Փաստաթուղթը սահմանող ակտ:

[2]Թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձևն ու կարգը սահմանող ակտ:

[3]Փաստաթուղթն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ձևակերպելու հնարավորությունը սահմանող ակտ:

[4]Էլեկտրոնային փաստաթղթի ձևաչափն ու կառուցվածքը սահմանող ակտ:

[5]Փաստաթղթի էլեկտրոնային պատճենի ներկայացնելը սահմանող ակտ:

[6]Փաստաթղթի էլեկտրոնային պատճենի ձևաչափն ու կառուցվածքը սահմանող ակտ:

[7] Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տվյալների էլեկտրոնային բազայի վարման հնարավորությունը սահմանող ակտ:

[8] Ձևակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկություններն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը սահմանող ակտ:

[9] «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձևակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը սահմանող ակտ՝ որպես այդ լիազորված մարմինների կողմից փաստաթղթերի ձևակերպման հաստատում:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Արտաքին տնտեսական գործունեության
իրականացման համար անհրաժեշտ
փաստաթղթերի եւ տեղեկությունների
վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված
տեղեկությունների միասնականացման եւ
ներդաշնակեցման աստիճանի ու հնարավորության
գնահատման, ինչպես նաեւ էլեկտրոնային
փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության
գնահատման մեթոդական մոտեցումների

(ձեւ)

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

փաստաթղթերից վերցված տեղեկությունների

Պետական կարգավորման ոլորտը	Փաստաթղթից վերցված տեղեկությունների անվանումը	Փաստաթղթից վերցված տեղեկությունների նկարագրությունը	Փաստաթղթի անվանումը	Թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները
1	2	3	4	5

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3

Արտաքին տնտեսական գործունեության
իրականացման համար անհրաժեշտ
փաստաթղթերի եւ տեղեկությունների
վերլուծության, նշված փաստաթղթերից վերցված
տեղեկությունների միասնականացման եւ
ներդաշնակեցման աստիճանի ու
հնարավորության գնահատման, ինչպես նաեւ
էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման
հնարավորության գնահատման մեթոդական
մոտեցումների

ՁԵՎԵՐ

ակտերի վերլուծության անցկացման արդյունքների հիման վրա եզրակացությունների

(ձեւ 1)

Ակտերի վերլուծության անցկացման արդյունքների հիման
վրա եզրակացություն

1. Փաստաթղթերի ընդհանուր քանակն ըստ————————————————————,

(պետական կարգավորման ոլորտ)

այդ թվում՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով սահմանված փաստաթղթերի քանակը————————————————————————————————

անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն———————————————————————

Բելառուսի Հանրապետություն———————————————————————

Ղազախստանի Հանրապետություն———————————————————————

Ղրղզստանի Հանրապետություն———————————————————————

Ռուսաստանի Դաշնություն———————————————————————

երրորդ երկրների հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերով սահմանված փաստաթղթերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն———————————————————————

Բելառուսի Հանրապետություն———————————————————————

Ղազախստանի Հանրապետություն———————————————————————

Ղրղզստանի Հանրապետություն———————————————————————

Ռուսաստանի Դաշնություն———————————————————————

2. Ակտերի ընդհանուր քանակն ըստ———————————————————————,

(պետական կարգավորման ոլորտ)

այդ թվում՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի քանակը———————————————————————

անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն———————————————————————

Բելառուսի Հանրապետություն———————————————————————

Ղազախստանի Հանրապետություն———————————————————————

Ղրղզստանի Հանրապետություն———————————————————————

Ռուսաստանի Դաշնություն———————————————————————

երրորդ երկրների հետ անդամ պետությունների կնքած միջազգային պայմանագրերի քանակը (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն———————————————————

Բելառուսի Հանրապետություն———————————————————

Ղազախստանի Հանրապետություն———————————————————

Ղրղզստանի Հանրապետություն———————————————————

Ռուսաստանի Դաշնություն———————————————————

(ձեւ 2)

Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ, վերլուծության մեջ չընդգրկված փաստաթղթերի մասով եզրակացություն

Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթի անվանումը	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը սահմանող ակտի վավերապայմանները	Փաստաթղթի վերլուծություն չանցկացնելու պատճառը

(ձեւ 3)

Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւակերպման հնարավորության գնահատման արդյունքների հիման վրա եզրակացություն

	Փաստաթղթերի քանակը	Փաստաթղթերի ընդհանուր քանակի մեջ մասնաբաժինը (տոկոսներով)
1. Փաստաթղթեր, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով դրանց ձեւակերպման հնարավորությունը սահմանված է՝		
Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝		
Հայաստանի Հանրապետություն		
Բելառուսի Հանրապետություն		
Ղազախստանի Հանրապետություն		
Ղրղզստանի Հանրապետություն		
Ռուսաստանի Դաշնություն		
2. Փաստաթղթեր, որոնց մասով էլեկտրոնային փաստաթղթի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են՝		
Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝		
Հայաստանի Հանրապետություն		
Բելառուսի Հանրապետություն		
Ղազախստանի Հանրապետություն		
Ղրղզստանի Հանրապետություն		
Ռուսաստանի Դաշնություն		

3. Փաստաթղթեր, որոնց մասով դրանց էլեկտրոնային պատճենները ներկայացնելը սահմանված է՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

4. Փաստաթղթեր, որոնց էլեկտրոնային պատճենի ձեւաչափն ու կառուցվածքը սահմանված են՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

5. Փաստաթղթեր, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաները, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրները (ներառյալ թույլատրման փաստաթղթերի համար էլեկտրոնային ռեեստրները) անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից վարելու հնարավորությունը սահմանված է՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

6. Փաստաթղթեր, որոնց մասով ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների տեղեկություններն «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրելու հնարավորությունը սահմանված է՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

7. Փաստաթղթեր, որոնց մասով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված ձեւակերպված փաստաթղթերի տվյալների էլեկտրոնային բազաների, այդ թվում՝ էլեկտրոնային ռեեստրների տեղեկությունների օգտագործման հնարավորությունը, որպես այդ լիազորված մարմինների կողմից փաստաթղթերի ձեւակերպման հաստատում, սահմանված է՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

8. Փաստաթղթեր, որոնց մասով միայն թղթային կրիչի վրա դրանց ձեւակերպման հնարավորությունը սահմանված է՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով, անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով (ըստ յուրաքանչյուր անդամ պետության)՝

Հայաստանի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4

Արտաքին տնտեսական գործունեության
իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի
եւ տեղեկությունների վերլուծության, նշված
փաստաթղթերից վերցված տեղեկությունների
միասնականացման եւ ներդաշնակեցման
աստիճանի ու հնարավորության գնահատման,
ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի
ձեւակերպման հնարավորության գնահատման
մեթոդական մոտեցումների

(ձեւ)

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկությունների օպտիմալ ցանկի ձեւավորման հնարավորության գնահատման արդյունքների հիման վրա

Փաստաթղթից վերցված տեղեկությունների անվանումը	Փաստաթղթից վերցված տեղեկությունների նկարագրությունը	Պետական կարգավորման ոլորտը	Փաստաթղթի անվանումը. թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները	Փաստաթղթի անվանումը. թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները	Փաստաթղթի անվանումը. թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները	...	Փաստաթղթի անվանումը. թղթային կրիչի վրա փաստաթղթի լրացման ձեւն ու կարգը սահմանող ակտի վավերապայմանները
1	2	3	4	5	6	...	N